Արձանագրություն 3

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան «18» մարտի 2021թ.

Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝

Գագիկ Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ

Հայկ Հակոբյան

Մարի Ստեփանյան

Քարտուղար՝

Երանուհի Սարգսյան

Օրակարգ

1. **Ընթացակարգի գնահատում**

1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ի, «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «Մովսեսյան» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի և «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերի տեխնիկական բնութագրերում /Հավելված 1.1/ առկա էին անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը նիստը կասեցվել և նշված մասնակիցներին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:
Մասնակիցները շտկել են առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում, բացի «Մովսեսյան» ՍՊԸ-ից:

Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը մերժել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը և տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. <u>Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>

2.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության մայիսի 4-ի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, հրավերի պահանջներին համապատասխան փաստաթղթեր ներկայացրած մասնակիցները 2021թ. մարտի 24-ին, ժամը 15:00-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների 1-19-րդ չափաբաժինների մասով, որը տեղի կունենա Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գյուրջյան փող., 10 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Ավետիսյան

Գնահատող անդամներ՝ _____ Հ. Հակոբյան

_____ Մ. Ստեփանյան

Գնումները համակարգող՝ _____ Ե. Սարգսյան